IQOS

ILUMA i

PRIME

Օգտագործման Ուղեցույց

Դադարի ռեժիմ

Դադարի ռեժիմը հասանելի է

HY **Դադարի ռեժիմը հասանելի է**
Երկու ուղղահայաց գծերը սենսորային էկրանին ցույց են տալիս դադարի ռեժիմի հասանելիությունը: Սահեցրեք ներքև ամբողջ սենսորային էկրանով՝ փորձը դադարեցնելու համար: Դադարի ռեժիմը կարող է օգտագործվել մեկ անգամ՝ առաջին կամ երկրորդ անընդմեջ օգտագործման ընթացքում, և կարող է ակտիվացվել փորձառության առաջին 3 րոպեների կամ 8 ներքաշումների ընթացքում:



Դադարի ռեժիմը ակտիվ է

HY **Դադարի ռեժիմը ակտիվ է**

4 ուղղահայաց գծերը և սարքի թրթռումը ցույց են տալիս, որ դադարի ռեժիմը ակտիվացված է:Դադարի ռեժիմը կարող է տևել մինչև 8 րոպե: Եթե փորձը չվերսկսվի, ապա բռնիչը ավտոմատ կերպով կանջատվի:

Փորձի վերսկսում

HY **Փորձի վերսկսում**
Սահեցրեք վերև ամբողջ սենսորային էկրանով և սպասեք տաքացման ավարտին՝ փորձառությունը վերսկսելուց առաջ: Թրթռումը և լույսը ցույց կտան, որ բռնիչը պատրաստ է փորձառության վերսկսմանը:

FlexPuff

HY **FlexPuff-**ը ավտոմատ կերպով վերլուծում է ձեր փորձառությունը և կարող է տրամադրել 4 լրացուցիչ ներքաշման հնարավորություն՝ մինչև 6 րոպե տևողությամբ:*

*FlexPuff-ը նախատեսված է սթիքերի հետ աշխատելու համար: Ակտիվացումը և ներքաշումների քանակը կախված են օգտագործման անհատական եղանակից: Ներքաշումների հավելյալ քանակը կարող է առաջարկվել ոչ բոլոր չափահաս սպառողների և/կամ փորձառությունների դեպքում: FlexPuff-ը չի ակտիվանում դադարի ռեժիմ օգտագործելու դեպքում:



Կարճ խորհուրդներ

Էկրանի կարգավիճակները

HY Էկրանի կարգավիճակները

Երկու գիծ՝ պատրաստ է երկու օգտագործման համար[1]:
Մեկ գիծ՝ պատրաստ է մեկ օգտագործման համար[2]:
(0) Մարտկոցն անհրաժեշտ է լիցքավորել[3]:
(E) Վերագործարկեք բռնիչը և գրպանի լիցքավորիչը[4]:



Flex մարտկոցի ռեժիմ

HY **Flex մարտկոցի ռեժիմ Արդյունավետության ռեժիմ (ստանդարտ)**
Մինչև 3 անընդմեջ օգտագործում առանց դադարեցման, կամ մինչև 2 անընդմեջ օգտագործում՝ մեկ դադարեցման հնարավորությամբ:
Էկո ռեժիմ*
Բռնիչը նախատեսված է մեկանգամյա օգտագործման համար:
Դադարի ռեժիմը հասանելի չէ:
*Էկո ռեժիմը կարող է գործարկվել միայն IQOS հավելվածի միջոցով, իսկ IQOS հավելվածի հասանելիությունը կարող է տարբերվել՝ կախված երկրից:

Վերսկսում

HY Վերսկսում

Տեղադրեք բռնիչը լիցքավորիչի մեջ և սեղմեք լիցքավորիչի կոճակը 10 վայրկյան: Բոլոր կարգավիճակի լույսերը կանջատվեն և կվառվեն՝ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ հաստատելու համար: Եթե խնդիրը չի լուծվում, դիմեք IQOS աջակցությանը:



Ինչպես օգտագործել Ձեր IQOS ILUMA i PRIME™

1.

Միացրեք

HY Միացրեք
Սեղմեք և պահեք լիցքավորիչի կոճակը 4 վայրկյան, ապա բաց թողեք: Կարգավիճակի լույսերը կվառվեն:



2.

Լիցքավորում

HY Լիցքավորում

Բռնիչը ավտոմատ կերպով կլիցքավորվի, երբ տեղադրվի լիցքավորման սարքում: Առաջին օգտագործումից առաջ ամբողջությամբ լիցքավորեք ձեր IQOS ILUMA i™-ը համատեղելի լիցքավորման սարքով՝ համաձայն անվտանգության նախազգուշացումների և հրահանգների: (մոտավորապես 135 րոպե):

3.

Տեղադրեք SMARTCORE STICK™

HY Տեղադրեք SMARTCORE STICK™
Տեղադրեք SMARTCORE STICK™-ը մինչև ֆիլտրի գիծը, մինչ բռնիչը կթրթռա:

4.

Ավտոմատ տաքացում

HY Ավտոմատ տաքացում
Տաքացումը սկսվում է ավտոմատ, կամ էկրանը վեր սահեցնելով: Սենսորային էկրանը ցույց կտա տաքացման կարգավիճակը:

5.

Օգտագործման սկիզբը

HY **Օգտագործման սկիզբը**
Սկսեք օգտագործումը
2-րդ թրթռումից հետո:



6.

Փորձառության հետհաշվարկ

HY **Փորձառության հետհաշվարկ**
Սենսորային էկրանի շուրջ լույսի ուղեցույցը ցույց է տալիս փորձառության մնացած ժամանակը:

7.

Գրեթե ավարտված է

HY **Գրեթե ավարտված է**
Վերջին 30 վայրկյանների կամ վերջին 2 ներքաշման դեպքում բռնիչը կթրթռա:



8.

SMARTCORE STICK™-ի հեռացում

HY SMARTCORE STICK™-ի հեռացում
Հեռացրեք օգտագործված SMARTCORE STICK™-ը և թափոնեք այն՝ համաձայն անվտանգության նախազգուշացումների և իրահանգների:

IQOS
ILUMA i

Սա անվտանգության նախազգուշացման նշան է: Այն օգտագործվում է Ձեզ ֆիզիկական վնասվածք ստանալու հավանական վտանգի մասին զգուշացնելու համար:

ՀԱՅԵՐԵՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ՄԻՆՉԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ:

Սույն Անվտանգության նախազգուշացումները և ցուցումները չեն կարող ընդգրկել բոլոր հնարավոր իրավիճակները, այդ իսկ պատճառով օգտվողները պետք է հնարավորինս զգույշ և ուշադիր լինեն:

ՊԱՀՊԱՆԵՔ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՅՍ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԴՐԱՆՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Սույն Անվտանգության նախազգուշացումները և ցուցումները վերաբերում են IQOS ILUMA i™-ին և IQOS ILUMA i PRIME™-ին:

Տես www.iqos.com կայքը՝ այս Անվտանգության նախազգուշացումների և ցուցումների ցանկացած փոփոխության համար:

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕԳՏԱՏԵՐԵՐ

- IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը նախատեսված են միայն չափահասների համար:
- IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը նախատեսված են այն չափահասների համար, ովքեր հակառակ դեպքում կշարունակեին օգտագործել ծխախոտ կամ նիկոտին պարունակող այլ ապրանքներ:
- Երեխաներն ու դեռահասները երբեք և ոչ մի դեպքում չպետք է օգտագործեն IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը կամ SMARTCORE STICKS™-ը:
- Այս արտադրանքը չպետք է օգտագործվի ֆիզիկական, զգայական կամ մտավոր սահմանափակ կարողություններով կամ գիտելիքների պակաս ունեցող անձանց կողմից, քանի դեռ նրանք չեն գտնվում հսկողության տակ կամ նրանց չի տրվել հրահանգ արտադրանքն անվտանգ կերպով օգտագործելու և դրա հետ կապված վտանգները հասկանալու համար:

ԾԽԱԽՈՏ ԵՎ ՆԻԿՈՏԻՆ

- SMARTCORE STICKS™-ը պարունակում են նիկոտին, որը կախվածություն է առաջացնում:
- IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը զերծ չեն ռիսկերից: Ծխախոտի օգտագործման հետ կապված առողջության ռիսկերը նվազեցնելու լավագույն միջոցը ծխախոտի և նիկոտինի օգտագործումից ամբողջությամբ հրաժարվելն է:
- Որոշ օգտագործողների մոտ կարող են առաջանալ կողմնակի ազդեցություններ, այդ թվում՝ ցավեր որովայնի, կոծքավանդակի հատվածներում, շնչահեղձություն, հազ, շնչառական խնդիրներ, գլխապտույտ, բերանի չորություն, կոկորդի չորություն, գինգիվիտ, գլխացավ, թուլություն, քթի խցանում, սրտխառնոց, բերանի գրգռվածություն, սրտխփոց, կոկորդի գրգռում և փսխում:
- Նիկոտին պարունակող արտադրանքները չպետք է օգտագործվեն այն մարդկանց կողմից, ովքեր գտնվում են ռիսկային խմբում կամ ունեն սրտի հետ կապված հիվանդություններ, շաքարախտ, էպիլեպսիա կամ նոպաներ:
- Նիկոտին պարունակող արտադրանքները չպետք է օգտագործվեն հղիության կամ կրծքով կերակրման ընթացքում: Եթե հղի եք, կերակրում եք կրծքով կամ ենթադրում եք, որ հղի եք, ապա պետք է ամբողջությամբ հրաժարվեք ծխախոտի և նիկոտինի օգտագործումից:

- Ծխելը դադարեցնելը կամ IQOS ILUMA i™-ին, IQOS ILUMA i PRIME™ -ին և SMARTCORE STICKS™-ին, կամ նիկոտին պարունակող այլ արտադրանքներին անցնելը կարող է պահանջել որոշ դեղամիջոցների (օրինակ՝ թեոֆիլինի, կլոզապինի, ռոպինիրոլի) դեղաչափի ճշգրտում:
- Եթե չգիտեք արդյոք կարող եք IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը կամ SMARTCORE STICKS™ օգտագործել՝ ելնելով ձեր ներկայիս առողջական վիճակից, ապա հարկավոր է խորհրդակցել բժշկի հետ:
- Եթե չգիտեք, թե արդյոք կարող եք IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը կամ SMARTCORE STICKS™ օգտագործել՝ ելնելով տվյալ պահին Ձեր առողջական վիճակից, խորհրդակցեք բժշկի հետ:

⚠ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԽԵՂԴՎԵԼՈՒ, ԿՈՒԼ ՏԱԼՈՒ ԵՎ ՍԽԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՏԱՆԳ

- Մշտապես պահեք IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը երեխաների և կենդանիների համար անհասանելի վայրում:
- ԽԵՂԴՎԵԼՈՒ ՎՏԱՆԳ – IQOS ILUMA i™-ն, IQOS ILUMA i PRIME™-ը, աքսեսուարները և SMARTCORE STICKS™-ը պարունակում են փոքր մասեր:
- SMARTCORE STICKS™-ը պարունակում է սուր եզրերով մետաղական մասեր:
- ԿՈՒԼ ՏԱԼՈՒ ՎՏԱՆԳ
  - Կուլ տված SMARTCORE STICKS™-ը կարող է լուրջ մնաս հասցնել ներքին օրգաններին՝ սուր եզրերով փոքր մետաղական մասերի պատճառով:
  - Կուլ տված SMARTCORE STICKS™-ը կարող է նիկոտինի թունավորման պատճառ դառնալ:
  - SMARTCORE STICKS™-ը կուլ տալու դեպքում անհապաղ դիմեք բժշկական օգնության:
- ՍԽԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՏԱՆԳ - Մի քանդեք SMARTCORE STICKS™-ը, քանի որ այն պարունակում է փոքր մետաղական մասեր՝ սուր եզրերով: Միշտ թափոնեք SMARTCORE STICKS™-ը ամբողջովին սառելուց հետո՝ թափոնների հեռացման տեղական կանոնակարգերի համաձայն:

⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ ՄԱՐՏԿՈՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎՏԱՆԳՆԵՐ

Էլեկտրական ռիսկեր

Այս Անվտանգության նախազգուշացումներին և հրահանգներին չհետևելը կարող է հանգեցնել հրդեհի, պայթյունի, էլեկտրական հարվածների, մնասվածքի կամ ինքներդ Ձեզ և այլ անձանց մնասելուն, կամ արտադրանքին և այլ գույքին մնաս հասցնելուն:

- IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը պետք է օգտագործեն միայն Ենթադրյալ օգտվողները:
- Մի օգտագործեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը այն վայրերում, որտեղ էլեկտրոնային սարքերի օգտագործումն արգելված է:
- Մի լիցքավորեք կամ օգտագործեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը կամ աքսեսուարները, եթե դրանք վնասված են, քանդված կամ կոտրված:
- Մի օգտագործեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը, եթե մարտկոցից առկա է հեղուկի արտահոսք:
- Լիցքավորեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը միայն փակ տարածքներում, ինչպես նշված է ⌂ նշանով, օգտագործելով արտադրողի կողմից հաստատված լիցքավորման մալուխը (առկա է տուփի մեջ) և սնուցման սարքը (որը պետք է ձեռք բերել վստահելի աղբյուրներից): Մի օգտագործեք արտադրողի կողմից չհաստատված աքսեսուարներ: Լրացուցիչ կարևոր անվտանգության տեղեկությունների համար կարդացեք «Տեխնիկական տվյալներ» բաժինը և այցելեք www.IQOS.com կայք:
- Ապրանքը հարկավոր է լիցքավորել միայն անվտանգ առավելագույն ցածր լարման միջոցով՝ 5Վ±2Վ սնուցման ադապտերով: Լրացուցիչ մանրամասների համար կարդացեք սույն Անվտանգության նախազգուշացումների և ցուցումների «Տեխնիկական տվյալներ» բաժինը:
- Մի օգտագործեք, մի՛ լիցքավորեք և մի՛ պահեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը բարձր ջերմաստիճանով վայրերում (օրինակ՝ ամռանը մեքենայի ներսում կամ ջերմության աղբյուրների մոտ, ինչպիսիք են տաքացուցիչները կամ բուխարիները):
- Մի օգտագործեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը այն վայրերում, որտեղ առկա են դյուրավառ նյութեր, հեղուկներ և գազեր:
- IQOS ILUMA i™ կամ IQOS ILUMA i PRIME™ սնուցման սարքը և լիցքավորման մալուխը չպետք է առնչվեն հեղուկի հետ: Մի դիպչեք IQOS ILUMA i™-ին կամ IQOS ILUMA i PRIME™-ին և/կամ դրա աքսեսուարներին, եթե դրանք թրջվել են կամ ընկել են որևէ հեղուկի մեջ:
- Մի մաքրեք սարքը որևէ մաքրող միջոցով: Մաքրեք միայն արտադրողի կողմից հաստատված աքսեսուարներով կամ գործիքներով:
- Մի մաքրեք սարքը, երբ այն միացված է:
- Պարբերաբար մաքրեք IQOS ILUMA i™-ի կամ IQOS ILUMA i PRIME™-ի USB լիցքավորման բնիկը՝ օտար մարմինների (օրինակ՝ փոշու մասնիկների) կուտակումից խուսափելու համար, իսկ USB լարն օգտագործելուց առաջ ստուգեք USB բնիկը:
- Օգտագործումից հետո փակեք սարքի կափարիչը՝ տաքացման խցիկում օտար նյութերի (օրինակ՝ փոշու մասնիկների) կուտակումից խուսափելու համար, և ստուգեք օտար նյութերի առկայությունը տաքացման

խցիկում՝ մինչև IQOS ILUMA i™-ի կամ IQOS ILUMA i PRIME™-ի օգտագործումը:

- Խնամքով վարվեք: IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը վայր մի գցեք կամ մի ենթարկեք սարքը ուժեղ հարվածների:
- Այս արտադրանքը չի պարունակում օգտագործողի կողմից սպասարկվող մասեր: Մի փորձեք բացել, փոփոխել, սպասարկել, քանդել կամ վերանորոգել IQOS ILUMA i™-ի կամ IQOS ILUMA i PRIME™-ի որևէ բաղադրիչ, կամ փոխարինել որևէ բաղադրիչ կամ մարտկոց:
- Մի օգտագործեք այս արտադրանքը, եթե այն ենթարկվել է ցրտի, ջերմության կամ խոնավության ազդեցության:
- Մի դիպչեք IQOS ILUMA i™-ին կամ IQOS ILUMA i PRIME™-ին և/կամ դրանց աքսեսուարներին, եթե դրանք գերտաքացած են, կայծ են արձակում, գոլորշի են առաջացնում, բռնկվում կամ այրվում են: Եթե կարող եք, և հնարավոր է, զգուշությամբ անջատեք այն սնուցման աղբյուրից:
- Մի փորձեք որևէ առարկա տեղադրել տաքացման հատվածում, բացառությամբ SMARTCORE STICKS™-ի կամ ILUMA™ Stick Remover-ի (ըստ անհրաժեշտության): Համոզվեք, որ սարքը անջատված է հոսանքից՝ մինչև ILUMA™ Stick Remover-ով SMARTCORE STICKS™-ը հեռացնելը:
- Օգտագործման ընթացքում սարքի մեջ որևէ մետաղական մաս մի տեղադրեք:
- Օգտագործեք սարքը միայն 0°C-ից բարձր և 40°C-ից ցածր ջերմաստիճաններում:
- SMARTCORE STICKS™-ը նախատեսված է միայն մեկանգամյա օգտագործման համար և նույն սթիք չի կարելի կրկնակի օգտագործել, վառել այն լուցկով, կրակայրիչով կամ որևէ այլ կրակի աղբյուրով:
- Երբեք մի թափոնեք IQOS ILUMA i™-ը կամ IQOS ILUMA i PRIME™-ը և/կամ դրա աքսեսուարները կենցաղային աղբի հետ, քանի որ դրանք կարող են շփման մեջ մտնել ջրի և/կամ այլ հեղուկների հետ:

Մարտկոցի հետ կապված ռիսկերը

IQOS ILUMA i™- ը և IQOS ILUMA i PRIME™-ը սնուցվում է հերմետիկ լիթիում-իոնային (Li-ion) մարտկոցով: Օգտագործման բնականոն պայմաններում մարտկոցը հերմետիկ է: Եթե նկատում եք մարտկոցի հեղուկի արտահոսք, հետևեք հետևյալ նախազգուշական միջոցներին.

- Եթե մարտկոցի արտահոսքի հեղուկ եք կուլ տվել, անհապաղ դիմեք բժշկի: Հարկավոր չէ առաջացնել փսխում, ուտել կամ խմել:
- Եթե շնչել եք արտահոսող մարտկոցի գոլորշին, ապա հարկավոր է դուրս գալ մաքուր օդի և դիմել բժշկի:
- Եթե մարտկոցի հեղուկը դիպչել է ձեր մաշկին, լվացեք այդ հատվածը, ինչպես նաև ձեռքերը, և խուսափեք աչքերին դիպչելուց:

- Եթե մարտկոցի հեղուկը դիպչել է ձեր աչքերին, անմիջապես լվացվեք մաքուր հոսող ջրով առնվազն 15 րոպե և դիմեք բժշկի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՋԵՐՄԱՅԻՆ ԱՅՐՄԱՆ ՌԻՍԿ

Անվտանգության այս նախազգուշացումներին և ցուցումներին չհետևելը կարող է հանգեցնել ջերմային այրվածքների.

- Պահեք IQOS ILUMA i™-ը, IQOS ILUMA i PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը մաքուր, չոր և զով տեղում:
- Մի օգտագործեք IQOS ILUMA i™-ը, IQOS ILUMA i PRIME™-ը և SMARTCORE STICKS™-ը բարձր խոնավության պայմաններում կամ արևի ուղիղ ճառագայթների տակ:
- Մի օգտագործեք այն SMARTCORE STICKS™-ը, որը ենթարկվել է չափազանց բարձր ջերմության կամ խոնավության ազդեցության:
- Օգտագործելու ընթացքում մի հեռացրեք SMARTCORE STICK™-ը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՐԳԻԿ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՌԻՍԿԵՐ

- IQOS ILUMA i™-ի, IQOS ILUMA i PRIME™-ի և SMARTCORE STICKS™-ի օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիա, օրինակ՝ դեմքի, շրթունքների, լեզվի, լնդերի, կոկորդի կամ մարմնի այտուցվածություն կամ շնչառական խնդիրներ:
- Վերը նշված ախտանիշներից որևէ մեկը զգալու դեպքում դադարեք օգտագործել IQOS ILUMA i™, IQOS ILUMA i PRIME™ կամ SMARTCORE STICKS™-ը և անմիջապես դիմեք բժշկի, քանի որ դրանք կարող են վկայել լուրջ ալերգիկ ռեակցիայի մասին:
- Որոշ SMARTCORE STICKS™ պարունակում են բուսական բաղադրիչներ, որոնք կարող են ալերգիկ ռեակցիաներ առաջացնել որոշ օգտագործողների մոտ (տես տուփի վրա): Մի կիսվեք IQOS ILUMA i ONE™ սարքերով այլ օգտագործողների հետ, որպեսզի նվազագույնի հասցնեք խաչաձև աղտոտման ռիսկը, որը կարող է հանգեցնել ալերգիկ ռեակցիայի:

SMARTCORE STICKS™-Ի ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- Օգտագործեք IQOS ILUMA i™ և IQOS ILUMA i PRIME™ միայն SMARTCORE STICKS™-ի հետ, որոնք հատուկ նախագծված են IQOS ILUMA սարքերի սերուկների համար:
- Երբեք մի օգտագործեք IQOS ILUMA i™ և IQOS ILUMA i PRIME™ սիգարետների կամ սմանատիպ արտադրանքների հետ:
- Մի օգտագործեք SMARTCORE STICKS™ նախորդ սերուկների IQOS™ սարքերի հետ:
- Մի փոփոխեք SMARTCORE STICKS™-ը և մի ավելացրեք դրանց որևէ նյութ: Դա կարող է մխասվածքի պատճառ դառնալ:

ԱՆՑԱՆԿԱԼԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

- Եթե դուք զգում եք առողջության հետ կապված որևէ անցանկալի ազդեցություն IQOS ILUMA i™, IQOS ILUMA i PRIME™ և/կամ SMARTCORE STICKS™-ի օգտագործման արդյունքում՝ խորհրդակցեք բժշկի հետ:
- Անցանկալի երևույթի կամ պատահարի մասին տեղեկատվությունը կարող եք անմիջապես տրամադրել՝ ձեր տարածաշրջանի Հաճախորդների սպասարկման կենտրոնին (մանրամասները նշված են Հաճախորդների սպասարկման և երաշխիքային գրքույկում): Կողմնակի ազդեցությունների մասին տեղեկացնելով՝ դուք կարող եք օգնել հավաքել լրացուցիչ տեղեկություններ սարքի անվտանգության մասին:
- Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել www.IQOS.com կայքը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բռնիչ՝
IQOS ILUMA i™ և IQOS ILUMA i PRIME™ Մոդել M0010
Մարտկոցի տեսակը՝ Լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց
Մուտք՝ 5Վ ⎓ 1.6Ա

Լիցքավորման սարք՝
IQOS ILUMA i PRIME™ Մոդել M0021
Մարտկոցի տեսակը՝
Լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց
Մուտք՝ 5Վ ⎓ 2Ա
Bluetooth® 5.0

Լիցքավորման սարք՝
IQOS ILUMA i™ Մոդել M0022
Մարտկոցի տեսակը՝ Լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց
Մուտք՝ 5Վ ⎓ 2Ա
Bluetooth® 5.0

Այս հավաքածուն կարող է չներառել բոլոր սարքերը, որոնք նշված են տվյալ Անվտանգության նախազգուշացումներում և ցուցումներում:

Տեղեկատվություն համատեղելի սնուցման սարքի մասին
Մոդել՝ S52A21, S21A20, S21A22, S21A23, S21A25, S21A27, S82A40, S82A41, S82A42, S82A43, S82A45, S82A46

Մուտք՝ 100 Վ-240 Վ~50-60 Հց 0.3Ա
Ելք՝ 5Վ ⎓ 2Ա
Ելքային հզորություն՝ 10.0 Վտ
Միջին ակտիվ արդյունավետություն՝ 79.0%
Էլեկտրաէներգիայի սպառում առանց ծանրաբեռնվածության՝
<0.09 Վտ

Օգտագործեք մատակարարվող լիցքավորման լարով:

IQOS ILUMA™-Ն ԵՎ IQOS ILUMA PRIME™-Ը ԹԱՓՈՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վավեր է եվրամիության և ԵՏՏ երկրներում

Այս նշանը սարքի կամ դրա փաթեթավորման վրա ցույց է տալիս, որ սարքը և դրա բաղադրիչ մասերը (ներառյալ մարտկոցները) չպետք է թափոնվեն այլ կենցաղային թափոնների հետ միասին: Փոխարենը, խորհուրդ է տրվում թափոնել ձեր կողմից օգտագործված սարքավորումը՝ այն հանձնելով էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների վերամշակման համար նախատեսված կետին: Ձեր օգտագործված սարքավորումների (ներառյալ մարտկոցների) տեսակավորումը և թափոնումը թույլ կտա պահպանել բնական ռեսուրսները և ապահովել դրանց վերամշակումը՝ առանց վնաս հասցնելու մարդու առողջությանը և շրջակա միջավայրին: Օգտագործման համար ոչ պիտանի սարքից՝ որպես չտեսակավորված կենցաղային թափոնից ազատվելը (օրինակ՝ թափոնների այրման կամ թաղման միջոցով) կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Օգտագործման համար ոչ պիտանի սարքը վերամշակելու վայրերի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք հաճախորդների սպասարկման կենտրոն: Արտադրանքի տեղական ներմուծողը կֆիլանսավորի վերադարձված օգտագործված սարքի վերամշակումը հատուկ մասնագիտացված հավաքագրման վայրերում՝ տեղական պահանջներին համապատասխան:

ՄԱՐՏԿՈՑԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ (ԹԱՓՈՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ)

Մարտկոցները չպետք է հեռացվեն սպառողի կողմից: Արտադրանքի մաշվելուց հետո միայն լիազորված վերամշակողը կարող է ապահով կերպով հեռացնել մարտկոցները՝ հետևելով ստորև նշված քայլերին:

IQOS ILUMA i PRIME™-ի լիցքավորման սարք (Մոդել M0021):

Քայլ 1՝ Սարքը ապամոնտաժելուց առաջ այն պետք է ամբողջովին լիցքաթափել:
Քայլ 2՝ Հեռացրեք ռետինե միջադիրը լիցքավորման սարքի դռնակից:
Քայլ 3՝ Հեռացրեք 2 պտուտակները:
Քայլ 4՝ Հեռացրեք մագնիսական միակցիչը փոքր գլխով պտուտակահանով (մոտ 1 մմ):
Քայլ 5՝ Հեռացրեք դռնակը՝ այն դանդաղորեն դանդաղ դուրս հանելով մետաղական պատյանից:
Քայլ 6՝ Հեռացրեք ռետինե տափօղակը (1 հատ) և տպատախտակի պտուտակը (1 հատ):
Քայլ 7՝ Անջատեք բոլոր ճկուն տպատախտակները (3 հատ) և միակցիչը (2 հատ)՝ լիցքավորիչի տպատախտակը հանելու համար:

Քայլ 8: Հեռացրեք շրջանակի 2 պտուտակները և հանեք այն մետաղական կորպուսից:
Քայլ 9: Հեռացրեք մարտկոցը՝ թեքելով այն վեր, և թափոնեք այն՝ համաձայն տեղական կանոնակարգերի:

IQOS ILUMA i™ Լիցքավորման սարք (Մոդել M0022):

Քայլ 1՝ Սարքը ապամոնտաժելուց առաջ այն պետք է ամբողջովին լիցքաթափել:
Քայլ 2՝ Բացեք դռնակը:
Քայլ 3՝ Հեռացրեք դռնակը մատներով:
Քայլ 4՝ Հանեք ստորին և վերին 2 պտուտակները:
Քայլ 5՝ Հեռացրեք լիցքավորիչի պատյանը:
Քայլ 6՝ Պտուտակեք էլեկտրոնային տախտակը (միայն 1 պտուտակ) և հեռացրեք ֆիքսատորը:
Քայլ 7՝ Հեռացրեք մարտկոցի միակցիչը տպատախտակից: Մի կտրեք մարտկոցի լարերը:
Քայլ 8՝ Անջատեք տպատախտակի վրայից լուսային կանալի FPC և մարտկոցի վրայից հեռացրեք 2 կապտոնային ժապավենները:
Քայլ 9: Հեռացրեք մարտկոցը՝ թեքելով այն դեպի վեր և թափոնեք՝ համաձայն տեղական կանոնակարգերի:

IQOS ILUMA i™ և IQOS ILUMA i PRIME™ Բռնիչ (Մոդել M0010):

Քայլ 1: Սարքը ապամոնտաժելուց առաջ այն պետք է ամբողջովին լիցքաթափել:
Քայլ 2: Բացեք օղակը:
Քայլ 3: Բացեք կողպեքի կափարիչը:
Քայլ 4: Հեռացրեք ամրացնող օղակը տպատախտակի վրայից:
Քայլ 5: Հեռացրեք մարտկոցը կորպուսից:
Քայլ 6: Հեռացրեք մարտկոցի լեզվակը տպատախտակից և բարձրացրեք այն:
Քայլ 7: Հեռացրեք մարտկոցը և թափոնեք այն՝ համաձայն տեղական կանոնակարգերի:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Սույնով Philip Morris Products S.A.-ն հաստատում է, որ IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը համապատասխանում են 2014/53/ԵՄ հրահանգի հիմնական պահանջներին և այլ համապատասխան դրույթներին: Համապատասխանության պաշտոնական հռչակագիրը կարող եք գտնել հետևյալ հղումով՝ www.pmi.com/declarationofconformity

IQOS ILUMA™ և IQOS ILUMA PRIME™ Սարքեր

Տեխնիկական կանոնակարգ «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011);

Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

USB լար

Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

IQOS ILUMA™-ն և IQOS ILUMA PRIME™-ը աշխատում են

2.402 – 2.480 GHz հաճախականության տիրույթում՝ 10.0dBm-ից պակաս առավելագույն ռադիոհաճախականության հզորությամբ:

Այս սարքը համապատասխանում է ռադիոհաճախականության ճառագայթման սահմաններին և ընտրվել է շարժական ճառագայթման պայմաններին համապատասխանելու համար՝ համաձայն EN 62311:2008:

Նախագծված և արտադրված է Philip Morris Products S.A.-ի վերահսկողությամբ, Քե Ժանղենո 3, 2000 Նուշատել, Շվեյցարիա:

Bluetooth®

Bluetooth® բառը և լոգոները գրանցված ապրանքային նշաններ են, որոնք պատկանում են Bluetooth SIG, Inc.-ին, և այդ նշանների օգտագործումը Philip Morris Products S.A.-ի կողմից իրականացվում է լիցենզիայի հիման վրա:

Հավելյալ տեղեկությունները IQOS ILUMA i™ և IQOS ILUMA i PRIME™ ֆիրմային ծրագրի լիցենզիայի վերաբերյալ հասանելի են www.IQOS.com կայքում:

© 2024 Copyright Philip Morris Products S.A.